**Արձանագրություն N 3**
**ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի**

ք.Երևան

29 հունվարի 2019թ.
ժամը՝ 15:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Օհանյան
Հանձնաժողովի բացող անդամներ՝ Ս. Թամրազյան, Մ. Հովհաննիսյան
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Ա. Հակոբյան, Հ. Ղազազյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Նավասարդյան

1. **Հանձնաժողովի նիստի օրակարգը**
**(Հ. Օհանյան)**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Անհամապատասխանությունները շտկելու մասին,
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:*

2. **Անհամապատասխանությունները շտկելու մասին**
**(Հ. Օհանյան)**

Ընդունել ի գիտություն՝ քանի որ հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել էին անհամապատասխանություններ ուստի հանձնաժողովը որոշել էր.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետի համաձայն վերը նշված անհամապատասխանությունների մասին ծանուցել՝ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին՝ հայտը շտկելու նպատակով, որը պետք է ներկայացներ իր շտկումները էլեկտրոնային եղանակով՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով. մինչև 29.01.2019թ. 15:00 ներառյալ:

Սահմանված ժամկետում մասնակցի կողմից ներկայացվել են շտկված փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:*

3. **Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**
**(Հ. Օհանյան)**

Ելնելով աշխատանքային անհրաժեշտությունից գնահատող հանձնաժողովը որոշեց նիստ հրավիրել ս.թ հունվարի 30-ին ժամը 12:00-ին «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26 հասցեում:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի.
նախագահ՝ Հ. Օհանյան
բացող անդամներ՝ Ս. Թամրազյան, Մ. Հովհաննիսյան
գնահատող անդամներ՝ Ա. Հակոբյան, Հ. Ղազազյան
քարտուղար՝ Հ. Նավասարդյան